մարդկութեանը շահ բերող և արժանաւոր անդամ կը լինինք։ Ուրեմն աշխատելով մեր ժողովուրդը զարգացնել՝ ոչ միայն ազգասիրութիւն կ'անենք մեր գործունեայ պարտքները, առաջնորդները ու հոգևորականները, այլև մարդասիրութիւն, որովհետև մարդկութեան մի տկար անդամ կը զօրացնենք, նորա գործունեայ անդամների թիւը միով բազմացնել կը ջանանք։

Եկէք ուրեմն, մի՛ ծուլանանք, թէ հոգևորական և թէ աշխարհական, թէ զարգացած երիտասարդներ թէ հարուստներ, մինը խելքով միւսը դրամով աշխատենք մեր ազգային տարրերը զարգացնել։ Մանաւանդ Տաճկահայոց կ'ուղղեմ իմ խօսքերը, որոնք Եւրոպայի լուսաւորութեանը առաւել մօտ, Բարձր Դրան շնորհքը վայելելով իրանց մտաւոր զարգացման ընթացքը իրանց ձեռքին ունին, բայց՝ ճշմարտութիւնը խոստովանելով՝ իրանց իրաւունքներից և այս յարմար միջոցից գրեթէ օգուտ չեն քաղել։ Արդայ ժամանակ՝ որ վա՜յ կը տանք այս կորցրած յարմար միջոցի վերայ, այս զարգացման հիմն ձգելու յաջող ժամանակի կորստի վերայ։ Նոքա եթէ հազար բերան Տէր Տէր բաց մեզ աղաղակենք, մեզ ոչ միայն չեն ճանաչիլ ու չեն բանալ, այլև ով գիտէ դէպ ի ուր քշեն և ինչ վիճակում մեզ։ Այժմ աշխատել պէտք է, ամենայարմար ժամանակն է։

Մեր զարգացած երիտասարդները Եւրոպայի սնոտի նորաձևութիւնները օրինակելու փոխանակ և ժամանակը սնոտի վատնելու, թող Եւրոպացւոց հասարակաց դաստիարակութիւնները օրինակեն, մեր ժողովրդի միտքը բանան, հիմնաւոր ընկերութիւններ կազմեն յօգուտ յառաջադիմութեան։ Իսկ մեր հարուստները, որոնք՝ ցաւելով պիտի յիշեմ Գերմաներէն «Ա. Ալշման» նշանաւոր օրագրի խօսքերը, մեր հարուստները «որոնք միայն իրանց քսակների համար կը հոգան՝», մարդավայել ու գովելի չէ՞ր լինի որ նոքա իրանց աւելորդից գումարներ կազմէին, որով պիտանի գրքեր թարգմանել տալով՝ զարգացնելու միջոցները դիւրացնէին, կամ ընդունակ պատանիք Եւրոպայի բարձրագոյն դպրոցներն ուղարկէին (մի երկու ազնիւ Հայ հարուստների օրինակին նայելով), ուր նոքա ուսումն կատարելագործել կարող էին, կամ երկրագործութեամբ, արհեստագիտութեամբ պարապել, որ մի ժողովրդի տնտեսական կեանքի բարօրութեան և ապահովութեան հիմն են։ Մի՞թէ առաւել ուրախալի չէր լինի հարուստներին նայել իրանց օգնութեամբ զարգացած երիտասարդների վերայ, որոնք հասարակաց տգիտութիւնը և թշուառութիւնը սակաւացնելով կը գրաւէին, քան թէ այն ոսկու անշարժ տոպրակներին, որոնք լցնելով ու լցնելով նոցա երկրպագութիւն կը մատուցանեն և վերջը նոցանից ստիպուած լինելով բաժանուել, ով գիտէ որ մերձաւոր կամ հեռաւոր շռայլին կը թողուն կամ ում ձեռքը կ'անցնի։ Մեր եկեղեցականների պարտքն է մանաւանդ աշխատել յօգուտ հասարակաց յառաջադիմութեան գումարներ ժողովել, որոնք ժողովրդի մէջ նշանաւոր ձայն ունին։ Եւ ունեցած եկեղեցական գումարները այնպէս գործ ածել, որ օրինաւոր արդիւնք բերեն . . . . . ։

Յ. Աճ։

Հայդելբերգ։

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԱՆՑՈՒԿ ՀՈԳԻՈՅ

Զարթի՛ր սիրուն դու իմ մանկիկ,
Քանի՞ ննջես հեծելով,
Զքնաղ դէմքիդ լոյս Արեգին
Ճաճանչել է խայտալով։

Շատ օրօրներ ես երգեցի
Տխուր աչացս արցունքով,
Բա՛ց քո պայծառ արտևանունք,
Հրեշտակի վեհ նայուածքով։

Ծնած օրից քո ճակատին
Դրոշմեցի Փրկչին Խաչ,
Որ դու լինիս միշտ անվեհեր,
Հոգւով ազատ, սրտով քաջ։

Թէ վատ բաղդի թշուառութեանց
Գերել են քեզ տեսիլներ,

Մի՛ սարսափիր գունատ դէմքով,
Շուտ սթափիր, ելի՛ ի վեր։

Կենաց վիճակ կը մթնանայ,
Բայց լուսնալոյ կայ և յոյս.
Զարթի՛ր, զարթի՛ր իմ Լուսնեակ,
Զարթի՛ր, և ինձ ձօնէ լոյս։

Օրօրներով շատ ննջեցիր,
Ժա՛մ է արդէն զարթնելոյ.
Զարթի՛ր, զարթի՛ր արդ կ'ձայնեն
Նշխարք քաջաց ի հողոյ։

Զգի՛ր հեռու քեզնից դու նինջ
Դուցաղնի պէս կաց յոտին,
Դրախտն Եդեմ իւր գետերով
Զարթի՛ր ձայնէ ջերմաղին։

Շարունակ նինջ վատ է մահից,
Կ'սիրէ կեանք արթնութիւն. . . .
Զարթի՛ր հապա՜ իմ քա՛ջ հոգեակ,
Քանի՞ քնես զօրն ի բուն։

Օրօրոցներ թէև անթիւ
Ունեն պատած քո բոլոր,
Բայց մի՛ ննջեր դու խոր քնով,
Թողլով խեղճիս միշտ մոլոր։

Թէ Մարդարէք գուշակեցին
Երկարատև քեզ այդ նինջ,
Կ'յաջողի ժամանակին
Առնել այդ գիր բնաջինջ։

Թէ կախարդներ սրսկեցին
Ի քեզ փոշի թմբրութեան,
Դրախտասահ գետոց սուրբ ջուր
Կրտայ քեզ կեանք արթնութեան։

Ո՛վ դու անմահ երկնից Արքայ,
Իմ դշխոյին տո՛ւր զարթնել
Քո ԽԱՉ և ՍԷՐ ազատ գրկած
Ցառա՛ջ, յառա՛ջ միշտ դիմել

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՇԵՂԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՍԱՆԴԻՍՏԵԱՆ

ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ

ՅԱԽԱԼՔԱԼԱՔ

Երժ. Ստեփաննոս Եպիսկ. Թահանայ Տէր-Մարգարեանց Փետր. 18 ամսաթ. գրութեամբ Էխալքալաքէն կը հաղորդէ մեզ հետեւեալը։

,,Հաւատի լինելով, որ Ձեր ազնիւ սրտին շատ ուրախալի է մեր Ազգայնոց յառաջադիմութիւնը, կը փութամ իմ սրտի խոր յարգանաց հետ ծանուցանել Ձեզ, որ մեր փոքրիկ քաղաքի մէջ այս օրերում բացուեցաւ Օրիորդական Ուսումնարան յանուն Սանդիստեան օրիորդական կամ ճիշտ ասել յանուն Սանդիստոյ սրբոյ կուսին, և ակն ունիմք շնորհիւ և խնամքի Տորին Վ. Հափառութեան հիմնաւոր և յարատև լեցի շարունակութիւն այնմիկ ուսումնարանի,,։

Ուրախ եմք մեծապէս, զի Էխալքալաքաբնակ մեր սիրելի ազգայինք ևս զգալով իգական սեռի ուսման և դաստիարակութեան անհրաժեշտ կարևորութիւնը՝ բացած են օրիորդաց դպրոց։

Խիստ մեծ կարօտութիւն ունի մեր ազգը կրկին սեռի դաստիարակութեան և լուսաւորութեան համար ամեն ջանք և միջոց ի գործ դնելու շտապել. և հարկ է գիտենալ, որ առանց իգական սեռի բարւոք կրթութեան և զարգացման՝ արականը այնքան արդիւնաւոր և օգտաւէտ